


Գ. Ա. ԱՐԵՎԱԿՈՒՆԻ

ԽՈՅԸՐ ՅԵՂՁՅՈՒԲԱՎԱՐ  
ԱՆԱՍԻՆԻ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՅԸ

(ՊԱԼԱՐԱԿԱԾ)



ՀԱՅՊԵՏՀԱՆՑ

ՅԵՐԵՎԱՆ

1939

04 AUG 2010

Գ. Ա. ԱՐԵՎԱՐԴԻՆԻ

649

Կ - 99

ОБЯЗАТЕЛЬНЫЙ  
КОНТРОЛЬНЫЙ  
ЭКЗЕМПЛЯР

ԽՈՅԸՐ ՅԵՂԶՅՈՒՐԱՎՈՐ  
ՇԱՀՄԱՆԻ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՋԸ

(ՊԱԼԱՐԱՆԸ)

ՑԱՐԵՎԻՉՆ

ZUBARZEVUS

1939

25 FEB 2013

1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ  
ՏՈՒՖԵՐԿՈՒԼՅՈՂԸ

Տուբերկուլյողը (պարագանելի, մասնաբարտախտ) վա-  
րակիչ հիվանդությունն է: Դշան սովորաբար անվա-  
նում են թոքախտ, սակայն դա ճիշտ չէ, վորովհետեւ  
թոքախտը տուբերկուլյողի միայն մեկ ձեռն է, այսինքն՝  
թոքերի տուբերկուլյողն է: Մինչդեռ տուբերկուլյողը,  
ինչպես կտեսնենք հետագայում, կարող ե վարակել  
բազմաթիվ որգաններ:

Տուբերկուլյողով վարակվում են ընդհանրաբես  
խողոր յեղջյուրավոր անասունները, խողերն ու թոչուն-  
ները, վարակվում են նաև գոչխարները, այծերը,  
ձիերը, շները, սակայն ավելի քիչ: Տուբերկուլյողը  
վարակիչ ե նաև մարդկանց համար:

Մարդիկ տուբերկուլյողով վարակվում են վոչ միշ-  
այն հիվանդ մարդկանցից, այլ նաև տուբերկուլյողով  
հիվանդ կենդանիներից: Ցերեխանները տուբերկուլյողով  
շատ հաճախ վարակվում են հիվանդ կովի կաթի միջու-  
ցով:

Տուբերկուլյողը խրոնիկ մի հիվանդություն է, վորը  
կարող է տարիներ տևել:

Այս հիվանդության հարուցիչները «տուբերկու-  
լյողի ցուպիկ» կոչված միկրոբներն են: Այդ միկրոբներն

Գ. Ա. ԱՐՄԱԿՈՒՆԻ

Տубerkulos կր. քօգ. սկոտա  
Համ. Արմ. ՀՀՊ, Երևան, 1980 թ.



253  
ԿՕ

անտեսանելի յեն: Տեսնել կարելի յէ նըանց միայն  
մանրադիտակ կամ միկրոսկոպ՝ կոչվող գործիքով:

Տուբերկուլյոզի միկրոբը հայտաբերել է զերմա-  
նացի գիտնական ՌՈԲԵՐՏ ԿՈԽԸ 1882 թ.: Դրա հա-  
մար այդ միկրոբներն անվանում են նաև «ԿՈԽԻ  
ցուպիկներ»:

Յեթե միկրոսկոպով՝ տուբերկուլյոզի միկրոբներին  
դիտելու լինենք, կտեսնենք, վոր նրանք բարակ ցու-  
պիկներ են, ծայրերը կրոր, բարակ թաղանթով շրջա-  
պատված:

Տուբերկուլյոզի ցուպիկներն արտաքին գործոննե-  
րի հանդեպ բավական դիմացկուն են: Անասունի արտա-  
թորանքի մեջ վոչնչանում են՝ միայն 13 որից, Հի-  
վանդ կենդանու խորխի մեջ՝ կարող են տարել նույ-  
նիսկ մինչև 4 ամիս: Ընդհանրապես՝ խոնավ միջավայ-  
րերը տուբերկուլյոզի միկրոբների համար նպաստա-  
վոր են: այդպիսի պայմաններում նրանք իրենց գոյու-  
թյունը կարող են պահպանել՝ 13-ից 30 որ և ավելի:

Սակայն բարձր ջերմությունը շատ արագ է՝ վոչըն-  
չացնում այդ միկրոբներին: Հում կաթի՝ մեջ՝ նրանք  
կարող են ապրել 10 որ, իսկ յեռացնելիս 2-3 ըուպե-  
յում վոչնչանում են: Արեգակի՝ ուղղակի՝ ճառագայթ-  
ները նրանց սպանում են մի քանի ժամկա ընթաց-  
քում: Ախտահանիչ նյութերի թույլ լուծությները՝ շատ  
հեշտությամբ են նրանց վոչնչացնում, որինակ՝ կար-  
բուլաթթվի 5% լուծույթը՝ կրածուրը, տուբերկուլյոզի  
ցուպիկներին սպանում են 5 րոպեյում:

## 2. ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ՏԱՐԱԾՈՒՄՆ ՈՒ ՆՐԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տուբերկուլյոզը, մասնավորապես խոշոր յեղջյուրա-  
վոր անասունի տուբերկուլյոզը, ինչպես նաև մարդ-  
կանց տուբերկուլյոզը, տարածված և բոլոր յերկրնե-  
րում: Բացառություն չի կազմում նաև Խորհրդային  
Միությունը:

Հայաստանի մի շարք շրջաններում նույնպես կա  
տուբերկուլյոզ:

Տուբերկուլյոզը պատկանում է այն հիվանդու-  
թյունների շարքին, վորոնք իրենց հասցրած վասով  
կերպանցնում են գյուղանտեսական կենդանիների  
մյուս հիվանդություններին:

Խոշոր յեղջյուրավոր անասունի՝ տուբերկուլյոզի  
հասցրած անտեսական վնասը կայանում է նրանում,  
վոր տուբերկուլյոզով վարակված կենդանիները ժամա-  
նակից շուտ հարկադրաբար խոտանվում են, վորով  
խոշոր յեղջյուրավոր անասունի կյանքի տեվողությունը  
կարճանում է, և դրա հետևանքով ել դժվարանում և  
առողջ մատղաների բուծումը, հիվանդ կենդանին նի-  
հարում է, կաթնատվությունը պակասում է, մորթելու  
գեղցում նրանց միսը մասամբ կամ ամբողջապես  
խոտանվում է, կոփերը յերբեմն ստերջ են մնում, կամ  
վիժում են, հիվանդ կոփերի կաթով կերակրված հոր-  
թերն ու խողերը նույնպես վարակվում են տուբեր-  
կուլյոզով: Այս բռլորը, ինչպես տեսնում ենք, հսկա-  
յական տնտեսական վաս են հասցնում ժողովրդական  
տնաեսությանը՝ խոչընդոտ հանդիսանալով սոցիալիս-  
տական անասնապահության զարգացմանը:

Բացի իր հասցրած անտեսական զւասից, առւբեր-  
կուլողը, մասնավորապես խոշոր յեղջյուրավոր անտ-  
սունի առւբերկուլողը, ինչպես վերևում ասացինք  
հիվանդ կենդանուց անյնում ե ձարբէ ոնց, մասավա ն  
յերեխաներին, հիվանդ կովի հում կաթի միջոցով։

Այդ պատճառով ել՝ հաշվի առնելով խոշոր յեղ-  
ջյուրավոր անասունի առւբերկուլողի հասցրած չա-  
րիքը, այս հիվանդության գեմ պարարն անհրաժեշտ  
ե իր ժամանակին առնել, բայց այդ մասին կխոսենք  
հետո։

### 3.ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՂԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Տուբերկուլյողի պատճառ, ինչպես վերելում ասա-  
ցինք, հանդիսանում են առւբերկուլյողի ցուպիկները,  
վորոնք բնության մեջ առանց կենդանական որգա-  
նիզմի չեն կարող իրենց գոյությունը պահպանել։ Յեթէ  
բնության մեջ մի վորեւ տեղ առւբերկուլյողի բացիլ-  
ներ են գտնվում, դրա պատճառը միայն այն ե, վոր  
նրանք այնտեղ առւբերկուլյողով հիվանդ կենդանուց  
են ընկած լինում։ Անհրաժեշտ են նշել, վոր տուբեր-  
կուլյողով տաւապող կենդանիներից վոչ բռլոր վարակ  
տարածելու ընդունակ են։ Վարակը կարող են տարա-  
ծել միայն նրանք, վորոնք տառապում են այսպիս-  
կոչված բաց առւբերկուլյողով, այսինքն՝ այն անա-  
սունները, վորոնց առւբերկուլյողի ոջախներն արտա-  
քին աշխարհի հետ ուղղակի հաղորդակցություն են  
ունենում։

Սակայն վոչ բոլոր դեպքերու և առողջ կենդանու-  
որգանիզմը մտնող առւբերկուլյողի ցուպիկները կարող

են տուբերկուլյող առաջացնել։ Մի շարք պայմաններ  
կենդանու որգանիզմը թուլացնելով, տուբերկուլյողի  
զարգացման համար նպաստավոր հող են ստեղծում։

Մի շարք հիվանդություններից անասուններն այն-  
քան են թուլանում, վոր նրանց որգանիզմը տուբեր-  
կուլյողի ցուպիկներ մտնելու դեպքում նրանք շատ հեշ-  
տությամբ հիվանդանում են առւբերկուլյողով։

Կովերի անկանոն և վատ պահպանումը, նեղ, մութ,  
խոնավ շենքերը, նրանց խիստ տրամադրում են տու-  
բերկուլյողով հիվանդանալու։ Ամրող տարին գոմի  
մեջ պահելը, կամ ձմեռ ժամանակ բոլորովին գոմից  
գուրս չհանելը, անասուններին վատորակ կամ քիչ  
աննդարար կերով կերակրելը նույնպես նպաստում են  
նրանց առւբերկուլյողով հիվանդանալուն։

Ապացուցված ե, վոր կովերը տուբերկուլյողով  
վարակվում են զլխակորապես ձեռո ժամանակ գո-  
մերում, յերբ առողջ կենդանիները շփման մեջ են գտնը-  
վում հիվանդների հետ։ Էնդիակառակը, ամառը արտօտա-  
վարերում վարակը հիվանդ անասունից առողջին դըժ-  
վարությամբ և անցնում։ Բացոթյա պայմաններում  
վարակը տարածման հնարավորությունն ավելի քիչ ե,  
վորովինետև հիվանդ կենդանուց այլայլ ճանապար-  
հով մեզի, աղբի և այլ միջոցներով գետին ըն-  
կած առւբերկուլյողի ցուպիկներն արագորեն վոչնչա-  
նում են արեգակի լույսի աղղեցության տակ։ Այս  
պատճառով իրենց ժամանակը միշտ արոտավայրերում  
անցկացնող անասունների համար տուբերկուլյողը հա-  
մարյա անծանոթ եւ։

Այն գոմերում, վորտեղ տուբերկուլյողը շատ և  
առաջածված, տուբերկուլյողի բացիկները նստում են

խմելու ջրի, կերի մեջ և առողջ անասուններն այդպիսի կեր ուտելով, կամ խմելով վարակված ջուր, վարակվում են տուբերկուլյոզով:

Այս կտրծիքը, վոր էբրե թե տուբերկուլյոզով հիվանդանում են միայն արտասահմանից բերգած անասունները, սխալ ե, վորովհետեւ տեղական անասունների մեջ ել տուբերկուլյոզով հիվանդանալու դեպքեր քիչ չեն:

Տուբերկուլյոզով վարակումը կախված ենակ անասունի, հասակից և նրա ոդտագործումից. վորքան կենդանին յերիտասարդ ե, այնքան նա զգայուն և վարակման հանդեպ, սակայն վորովհետեւ հիվանդության ընթացքը խրճնիկ ե, այդ պատճառով հիվանդությունը հայտնաբերվում ե ավելի մեծահասակ անասունների մեջ:

Շատերը կարծում են, վոր տուբերկուլյոզը ժառանգական կերպով է փոխանցվում, բայց դա սխալ ե: Ապացուցված ե, վոր տուբերկուլյոզով հիվանդ կովկերից ծնված հորթերը առողջ են մնում, յեթե նրանք ծնվելու հենց առվանդից իրենց մորից բաժանվում են և կերակրվում առողջ կովի կաթով: Ժառանգական տուբերկուլյոզ կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, յերբ պտուղը վարակվում է մոր արգանդում, իսկ այդ հնարավոր ե, յեթե կովը սեռական որգանների տուբերկուլյոզ ունի:

Հորթերի և խոզերի տուբերկուլյոզի պատճառը հաճախակի հանդիսանում է նրանց վարակված կաթով կերակրելը: Յեթե նույնիսկ առողջ կովի կաթը հավասարաշափ խառնվի հիվանդ կովի կաթի հետ, այդ դեպքում կվարակվի ամբողջ կաթը և առաջանալու հետեւ միասին արտադրում ենակ տուբերկուլյոզի բացիկներ և տարածում ե իր ջապատում:

Վիկները վոչ թե կաթի սերի, այլ շիճուկի մեջ կլինեն: Այս բոլոր ասածներից հետեւ վոր տընտեսության մեջ տուբերկուլյոզի տարածման առաջնառներու համար անհրաժեշտ ե վերոհիշյալ պատճառները վերացնել առանձին ուշադրություն դարձնելով, վոր հոտի համարման ժամանակ նրա մեջ տուբերկուլյոզով վարակված անասուններ չմտնեն, ամենախիստ հսկողություն սահմանել անասունների կերակրման և պահպանման վրա՝ թույլ չտալ կերակրել տուբերկուլյոզից կտսկածնելի կերերով, պահպանել զոտնիզիների պայմանները, ինչպես նաև կենդանիները նորմալ կերպով շահագործել:

Նկատի ունենալով, վոր անասունի տուբերկուլյոզը մասսայական հիվանդություն է և մասնավորապես ավելի խոշոր տնտեսությունների հիվանդություն է, հետեւ վարար մեր խորհրդային և կոլեկտեվ տնտեսությունները պետք ե հատուկ ուշադրություն դարձնեն նախազգուշական (պրոֆիլակտիկ) միջոցառումների կրշառուման վրա:

#### 4. ՎԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Տուբերկուլյոզի գլխավոր տարածողը, ինչպես արգելու ասված ե, ամենից առաջ տուբերկուլյոզով հիվանդ անասունն է հանդիսանում, վորն իր արտազրած սեկրետունի և արտադրանքի հետ միասին արտադրում ենակ տուբերկուլյոզի բացիկներ և տարածում ե իր ջապատում:

Տուբերկուլյոզի տարածումը տնտեսության մեջ առեղի յե ունենում այնքան արագ, վորքան իմաս են

պահվում անասունները, վորքան կեղտու, խոնավ ու  
մութ են լինում շինքերը, բացակայում և մաքուր  
ողը և լավ կրակումը:

Գոմի մեջ վարակը արագկերպով փոխանցվում և  
սկզբում այն կովին, վորն ավելի մոտիկ և կանգնած  
հիվանդին և ապա՝ աստիճանաբար մնացածներին:

Վարակումը կարող ե տեղի ունենալ նաև, յերբ  
հիվանդ կենդանին լիզում կամ հոտոտում և առողջին:  
Տուբերկուլյոզի տարածման մեջ մեծ դեր ե խաղում  
նաև խնամող անձնակազմը, վորը սպասարկելով նախ  
հիվանդ անասունին, ապա անցնում և առողջին և իր  
ձեռքերով, վոտքերով, հագուստով նպաստում և հիվանդության նորանոր անասունների փոխանցվելուն:

Այս պատճառով ե, վոր հիվանդ անասուն հայտաբերելու դեպքում անհրաժեշտ ե նախ առողջ անասուններին անջատել հիվանդներից, իսկ յերկրորդ՝  
չթույլատրել, վոր միենույն մարդը սպասարկի թե  
առողջ և թե հիվանդ անասուններին:

Տուբերկուլյոզով վարակումը տեղի յե ունենում  
թե վարակված ող շնչելու և թե վարակված կեր ուտեւ-  
լու միջոցով:

Ներշնչված ողի միջոցով վարակումը տեղի յե  
ունենում այն գոմերում, վորաեղ տեղափորվում հետ  
թոքերով հիվանդ անասունները: Հաղալիս կենդանին  
իր շուրջը տարածում է ջրի մանր կաթիներ, վորոնց  
հետ միասին դուրս են գալիս նաև բացիներ ու կեղառառառաւմ են կերը, ջուրը, ցամքարը, պատերը և շենքում գտնվող ամբողջ ինվենտարը:

Ջրի կաթիների հետ միասին այդ իրերի վրա  
նստած բացիները նորից կարող են փոշու միջոցով

ոգ բարձրանալ և կենդանու շնչառության միջոցով  
նրա թռքերն անցնել: Այս պատճառով հիվանդ կեն-  
դանդիներին շրջապատող ողը միշտ վարակված ե և  
առողջ կենդանին վարակվում ե այդ ողը շնչելով, և  
ոյնքան շուտ, վորքան մոտ ե լինում կանգնած հի-  
վանդին:

Կերի միջոցով վարակվելու խնդրում մեծ դեր է  
կատարում հիվանդ կրվերի կաթը, վորն անհամար  
բացիներ և պարունակում, յեթե տրվում ե հում վի-  
ճակում կամ ծծվում ե կրծից:

Կենդանին վարակվում ե նաև վարակված կեր  
ուտելու, վարակված ջուր խմելու և հիվանդ կեն-  
դանու լիզելու միջոցով:

Կերակրման միջոցով վարակվելու առիթ են ծա-  
ռայում տուբերկուլյոզով հիվանդ կենդանու ներքին  
որգանները, վորոնք կենդանուն մորթելուց հետո խո-  
անվում են և առանց յեփելու տրվում են անասուն-  
ներին (խոզերի), թե հիվանդին և թե առողջին միե-  
նույն դույլով ջրելը կամ հիվանդ կենդանուց ավելա-  
ցած կերն ու ջուրը առողջ կենդանուն տալը:

Հիվանդ կենդանիները խորսի, թուքի, կղկղանքի,  
մեզի և այլ արտաթօրանքի միջոցով տուբերկուլյոզի  
բացիներ են արտադրում և զրանով վարակում են  
վոչ միայն գոմի ու այնտեղ գտնվող իրերը, այլ նաև  
այն արտավայրերը, վորաեղ նրանք արածում են,  
բայց վորովհետև տուբերկուլյոզի ցուպիկներն արե-  
գակի ճառագայթների ազդեցությունից արագ վոչնշա-  
նում են, այդ պատճառով հաճախ և ավելի շատ հի-  
վանդներ ենք տեսնում զոմերում պահվող կենդանի-  
ների մեջ:

Խոշոր յեղջյուրավոր անսառունների տուբերկուլյոզի տարածման այլ ճանապարհներից կարելի յէ հիշատակել զուգավորման ժամանակ տեղի ունեցող վարակումը, յերբ մեկ կամ մյուս անհատի սեռական գործառնները վարակված են լինում:

Իսկ կըծի վարակումը կարող եւ տեղի ունենալ տուբերկուլյոզի բացի ներով վարակված ցանքարի միջոցով:

Բացի ները ներս են մտնում պտուկների միջով և տարածվում են կըծի ավելի խոր մասերում:

Նկատի ունենալով, զոր խոշոր յեղջյուրավոր անսառունը տուբերկուլյոզով վարակվում եւ միայն հիվանդ կենդանու շնորհիվ և խորխում, կղղանքում, մեղում, կաթում գտնվող բացի ների միջոցով, վարակված կերն ուսերու կամ ողը շնչելու միջոցով, ուստի անհրաժեշտ եւ հիվանդ կենդանիներին ժամանակին հայտաբերեն նրանց առանձնացնել և վարակի տարածումը կանխելու համար համապատասխան միջոցներ ձեռք առնելի վարի մասին հետո կտեսնենք:

## 5. ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ԵՅՈՒԹՅՈՒՆՆ ԱԻ ՆՇԱՆԵՐԸ

Տուբերկուլյոզի ցուպիկները, լինի դա վարակված ող շնչելով, կամ թե վարակված կեր ուսերով՝ մտնելով մարմնի մեջ, ավշային անոթների միջոցով անցնում են արյան մեջ և արյան շրջանառության միջոցով՝ մարմնի զանազան որդանները: Տուբերկուլյոզի բացի ներն ամենից ավելի նախընտրում են թոքերի հյուսվածքը. միկրոբներն անցնելով այնտեղ, սկսում

են աստիճանաբար բազմանալ և տարածվել ավելի խոր քերը: Նրանք առաջացնում են պալարներ թե թոքերում և թե մարմնի այլ որգաններում: Պալարները սկզբում շատ մանր են, յորենի հատիկի չափ, սակայն աստիճանաբար մեծանալով դառնում են նույնիսկ ընկույզի մեծության: Այս պալարներն իրենց մեջ պարունակում են մոխրագույն թարախ, վորը հետագայում գեղնագույն և գառնում: Այսպիսի հանգույցներ (պալարներ) հաճախ լինում են տուբերկուլյոզով հիվանդ կենդանիների զարթաղանթներում (վորավայնաթաղանթում, կրծքաթաղանթում), այդ հանգույցները երար հետ միանալով դառնում են ավելի մեծ հանգույցներ և իրենց ձեղով նման են մարդարտի: Յեթե տուբերկուլյոզի ցուպիկներն անցնում են արյան շրջանառության մեջ մեծ քանակությամբ, ոյլապիսի տուբերկուլյոզը սուր բնույթ և կրում, իսկ յեթե տուբերկուլյոզի ցուպիկներն անցնում են քիչ քանակությամբ, այդ դեպքում տուբերկուլյոզը լինում և խրոնիկ:

Քանի վոր տուբերկուլյոզը մեծ մասամբ խրոնիկ հիվանդություն ե, այդ պատճառով նրա նշանները բազմազան են և կախված են որդանիզմի վարակման աստիճանից ու վարակված որգանից: Կարող ե պատահել, վոր կենդանու որդանիզմի համար նպաստավոր պայմաններ լինելու դեպքում, տուբերկուլյոզի զարգացումը կանգ առնի, կամ նույնիսկ բոլորովին վերանայ-

Տուբերկուլյոզի ընթացքը կարող ե լինել միանգամայն աննկատելի, առանց վորեվե տեսանելի նշաններ ի, վորոնք ցույց տային հիվանդության գոյության մասին: Այս ժամանակ, յերբ խանգարված ե որդանիզ-

մի կենսագույն յությունը հիվանդության առանձին նշանները պառաւ են յերեվան գալ:

Առանձին անասունների տուբերկուլյոզը տարիները կարող ե տեսնել Խոշոր յեղջյուրավոր անասունների տուբերկուլյոզի նշաններ են համարվում՝ մաշկառածականության բացակայությունը, վորի փոխարեն մաշկը կարծր ե լինում, կենդանու հայացքը տըստը, մազերը փշաքաղված, կենդանին նկատելի կերպով նիերում, հյուծվուժ ե, հաճախակի գարշակոտ լուծ ե ունինում, վօրը բուժման դժվար ե յենթարկվում, աչքերի փայլը կորչում ե ու աչքերը փոս են ընկնում, տեսանելի լորձաթաղանթները գժկույն են, ախորժակը բացակայում ե:

Խոշոր յեղջյուրավոր անասունի տուբերկուլյոզի ժամանակ ավշային գեղձերը մեծանում են, յենթածնոտային և հետըմպանային գեղձերը մեծանում են, բերանից, ինչպիս նաև քթից առատ լորձ է հոսում, վօրն անասունի խեղդվելուն պատճու ե լինում, մեծանում են նաև ականջների, վզի, թիակի, աճուկի շուրջը գտնված և այլ գեղձերը:

Տուբերկուլյոզով հիվանդ կենդանիները կանգնած են միշտ գլուխը կախ ե լեզուն բերանից դուրս ընկած, վոտքերն աջ ու ձախ տարածած: Շնչառությունը կատարվում ե խոփոցով ու տնքոցով, մասնավորապես կերուտելիս կամ ջուր խմելիս, խրոնիկ տուբերկուլյոզի ժամանակ մարմնի ջերմությունը բնականի հետ համեմտած մի առանձին տարբերություն չի ներկայացնում, լինում ե 39,5 աստիճան: Հյուծվելու, քայլայելու, ինչպիս նաև շնչառության ժամանակ դացած

անհանդապության հետեւանքով, կենդանին վուաքի վրայերկարատել մնալ չի կարող և յերկար պառկած մնալուց հետո սատկում ե:

## 6. ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Խոշոր յեղջյուրավոր անասունի տուբերկուլյոզը մնում է զանազան տեսակ, նայած թե հիվանդության միկրոբները կենդանու մարմնի վոր մասում են զարգանում և հիվանդությունն ինչպիսի արտաքին նշաններ ունի:

Խոշոր յեղջյուրավոր անասունը ունինում է թոքերի կրծի, աղիքների, լյարդի, փայծաղի, յերիկամների, ուղեղի տուբերկուլյոզ, մարգարտախոտ կամ կրծքային և վորովայնային խոռոչների շճաթաղանթների տուբերկուլյոզ:

Մակայն ամենից շատ վարակվում են թոքերը, վորովակամում է 40—80 % համեմտած մյուս տեսակների հետ:

1. Թոքերի տուբերկուլյոզը.— Թոքերի տուբերկուլյոզի ժամանակ վարակվում են թոքերը, չիվանդությունն ամենից առաջ արտահայտվում է հազոր: Սկզբում հազը լինում է հազվադեպ, կարծ, չոր և զորեղ. կենդանին հազում ե այն ժամանակ, յերբ նրա շնչափողի ճանապարհների լորձաթաղանթը ցրտից գրգռվում է, որինակ՝ յերբ առավոտյան գոմի դռները բաց են անում և պաղ ողի հոսանքը ներս ե մտնում, յերբ կենդանուն պաղ ջուր են տալիս, ինչպիս նաև կենդանու արագ շարժումների ժամանակ:

Թոքերի վարակման ժամանակ հիվանդությունը

լինում ե յերկարատեք: Դնալով հազը ավելի հաճախակի յե դառնում, ցավագին ու խռպոտ: Քթից հսում և թելանման լորձաթարախային հեղուկ, վորը կենդանին լիդելու ժամանակ հաճախ կուլ ե տափս, հիմանդի շնչառությունը դժվարանում ե, արտաշնչման ժամանակ կենդանին տնքում ե: Թոքերի վարակման ժամանակ հաճախ լինում ե կրծքաթաղանթի տուբերկուլյոզային բորբոքում, ու յերբ ձեռքով սեղմում են կրծքի վանդակի առանձին ժամերը, կենդանին զգացած ցավի հետևանքով սկսում ե հազար և աշխատում և ճնշումից խուսափել:

Քանի հիվանդությունը զարգանում ե, այնքան կենդանու զբությունը վատանում ե, հիմանդը սկսում է նիհարել, ախորժակն անհնտանում ե, աշխատունակությունը՝ կորչում և մինչև հիվանդության կիսիկական նշանների յերեան դալը, կենդանին բացի լներ և արտադրում և վարակը արածելով, շրջապատի առողջ կենդանիներին վարակում ե:

Թոքերի տուբերկուլյոզի ժամանակ վարակվում են համապատասխան ավշային գեղձերը, վորոնց ծայրերը խիստ մեծանում են:

2. Կերծի տարեկուլյոզը — կրծքի տուբերկուլյոզը հազվադեպ և պատահում և զարգանում և աննկատելի կերպով: Հիվանդությունը հնարավոր և լինում ճաշաչել նրանով, վոր վերկրծային ավշային գեղձը մեծանում ե և յերբեմն մեծ չափերի յե հասնում:

Կրծքի տուբերկուլյոզը արտահայտվում ե կրծքի հետեւի մեկ կամ յերկու քառորդների մեծացումով, վորոնք շոշափելիս ցավազդաց չեն, առաջ չեն և պինդ

են: Վորոշ ժամանակ հետո հիվանդությունն անցնում է ինչպես հարեվան քառորդին, նույնպես և առջելիք քառորդին, ավելի մեծանում ե, և նույնիսկ յերեխայի դիմի չափ և դառնում:

Կաթը կթելուց հետո կուրծը դառնում է թույլ, շոշափելիս մտների տակ կարելի յե զգալ մեծ ու փոքր մի քանի հանգույցներ, պաղ, նույնպես պինդ և վոչ ցավազդաց:

Զնայած կրծքի պնդանալուն, կաթի արտադրույունը յերկար ժամանակ մնում է բնական վիճակում և միայն հիվանդության ավելի զարգացման ժամանակ կաթի արտադրությունը նվազում ե և կաթը դառնում է ջրիկ, դեղնավուն, իսկ հետագայում՝ ջրանման—պըզտոր:

Տուբերկուլյոզի բացի լները կարող են լինել թե վարակված և թե չվարակված կրծքի կաթում:

Ավելի հազվագեպ ե նկատմամբ աղիքների, արգանգի, լյարդի, յերիկամների և այլ որգանների տուբերկուլյոզ:

Վորպես այդ որգանների առանձին հիվանդություն հազվագեպ ե պատահում, սակայն տյու կամ այն որգանի տուբերկուլյոզի ժամանակ վարակը կարող ե անցնել նաև վերոհիշյալ որգաններին:

## 7.ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱՆ (ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ)

Տուբերկուլյոզի գեծ անսանաբուժա-սանիտարական միջոցառումները ժամանակին կիրառելու համար կարեվոր նշանակություն ունի վորոշել հիվան-

զությունն այն ժամանակ, յերբ նու գտնվում է ծածուկ վիճակում, այսինքն՝ կենդանին թեղետ և հիվանդ է, սակայն վոչ մի արտաքին նշան չի նըշկատվում և աննկատելիորեն վարակը առաջանաւ է, վարակելով իրեն շըջապատող միջավայրը և իրեն մոտիկ գտնվող առողջ կենդանիներին:

Տուբերկուլյոզի զարգացման սկզբում ավելի դժվար է խոշոր յեղջյուրավոր անասունի հիվանդության դիագնոզը դնել վարովհետև այդ ժամանակ հիվանդ կենդանին գեռ բացահայտ կլինիկական նշաններ չի ցույց տալիս:

Տուբերկուլյոզի բաց ձեռվ հիվանդ, այսինքն հիվանդության բացահայտ նշաններ չունեցող, սակայն տուբերկուլյոզի բացիներ արտադրելու ընդունակ կենդանիներին հայտաբերելու համար անհրաժեշտ ե բակտերիոլոգիական հետազոտությունն կատարելը։ Հետազոտության յենթակա յեն հիվանդ կենդանիների խորիս, կաթը, ուռուցքների պարունակությունը, իսկ սատկած կենդանիների՝ ավշային գեղձերը և այլ վարկված որգանները։

Նկատի ունենալով, վոր խոշոր յեղջյուրավոր անասունը յերբեք խորխը չի թքում, այլ կուլ և տալիս, ուստի խորխը ստանալու համար հանձնարարվում է խոշոր յեղջյուրավոր անասունին արենստական կերպով հաղացնել, վորից հետո ձեռքը տանելով ըմպանի խոռոչը՝ ձեռք բերել խորխը։ Ստացված խորխը հավաքում են մի մաքուր ապակյա անոթի մեջ։

Կաթը հետազոտության համար նույնպես վերցնում են մաքուր ամանի մեջ 100—150 խոր.սանտ. չափով։

Նախապես կուրծը պետք է լվացվի, ախտահանվի, կաթի առաջին շիթերը պետք է կթվեն, իսկ ապա պետք ե վերցնել հետազոտության համար անհրաժեշտ չափով կաթի նմուշը։ Կղկղանքը հետազոտության համար վերցնում են 50 գրամի չափ ուղիղ աղիքից։

Հետազոտության համար ստացված նյութն անմիշ ջապես պետք ե ուղարկել լաբորատորիա, վորաեղանակությունը պիտի հետազոտի այն։ Ստացված նյութի տեսակի համեմատ լաբորատորիայում անասնաբուժն այդ նյութը համապատասխան մշակման և յենթարկում, որինակ՝ սրսկում ե փորձնական լաբորատոր կենդանիներին՝ նրանց վարակելու և հետագայում նրանց հիվանդությունը հայտաբերելու նպատակով, ցանում ե միկրոբները հատուկ սննդացին միջավայրում՝ նրանց աճեցնելու համար և այլն և այդպիսի մշակումներից հետո պատրաստում ե քսուկներ ապակու վրա, հատուել ձեվով ներկում և նրանց և ապա միկրոսկոպի միջոցով այդ քսուկները հետազոտում։ Հետազոտվող նյութի մեջ տուբերկուլյոզի բացիների հայտաբերումը ցույց ե տալիս տուբերկուլյոզի բաց ձեվի առկայությունը այն կենդանու մոտ, վորից նյութ ե վերցված, սակայն ցուպիկների բացակայությունը հիմք չի տալիս հաստատելու, վոր կենդանին վարակ տարածող չի։

Բայց ավելի ճիշտ կերպով վորոշելու համար, թե տվյալ կենդանին հիվանդ է տուբերկուլյոզով թե վոչ, կերավլում և դիագնոստիկայի մի այլ մեթոդ, տուբերկուլինի կոչված փորձը (տուբերկուլինիզացիա), վորի միջոցով հայտաբերվում են խորչը յեղջյուրավոր անասունի տուբերկուլյոզի բոլոր տեսակները։

Տուբերկուլինը տուբերկուլյոգի բացի լներից պատրաստած թափանցիկ քիչ դարչնագույն մի հեռուկ ե, վորը լցված ե լինում ապակյա փակ սրվակաների մեջ։ Տուբերկուլինը պատրաստվում ե հատուկ զարորատորիաներում։ Այս տուբերկուլինն առաջին անգամ 1890 թ. ստացել է ՌՈՒԲԵՌՏ ԿՈԽԸ, վորը գտնել ե նաև տուբերկուլյոգի ցուպիկը։

Տուբերկուլինի փորձը կիրառվում ե յերկու ձեռվով՝ մաշկի մեջ, կամ աշքի մեջ սրսկելով։

Կարելի յե գործադրել նաև յենթամաշկային ձեռվով։ Տուբերկուլինի սրսկումը կատարում ե անասնաբուժը։

Ներմաշկային փորձը կայանում ե հետեւյալում։ Խոշոր յեղջյուրավոր անասունի պոչի տակի ծալքերից մեկի կաշիկի մեջ անասնարուժը շպրիցի միջոցով 0,2 խոր. սանտ. տուբերկուլին ե ներարկում։

Ներարկումից հետո մաշկում գոյանում ե մի փոքր բշտիկ, վորը առողջ կենդանիների մոտ 5—10 րոպեյից անհետանում ե։ Յեթե կենդանին տուբերկուլյողով հիվանդ ե, այդ դեպքում սովորաբար առաջն որերը՝ ներարկումից 48—72 ժամ հետո կենդանին հակադրում ե։

Տուբերկուլին սրսկած տեղում ուսուցք ե առաջանում, վորը շաշափելիս ցալազգաց ե, տաք ու կարծրած։ Սրսկած տեղում լրօրու մեծության կամ ավելի մեծ ուսուցք առաջանալու դեպքում ուսակցիան համարվում ե դրական, այսինքն՝ կենդանին տուբերկուլյողով հիվանդ է։ Բնդհակառակը, յեթե նկատվում ե մաշկի աննշան հաստացում ե դրա հետ միասին այդ տեղը

պաղ ե և ցավ չի զգացվում, այդ դեպքում՝ կենդանին տուբերկուլյողով հիվանդ չեւ

Մակայն ամենալավ և գործնականում լայն կիրառվող մեթոդը աչքի փորձն ե. 3—4 կաթիլ տուբերկուլինը կաթեցնում են մի աչքի մեջ, իսկ մյուս աչքը մաքուր ե մնում, Դրանից վեց ժամ հետո անասնաբուժը կատարում ե, ուսակցիայի հաշվեառում, այսինքն՝ ստուգում ե, թե ինչպիսի փոփոխություններ են առաջացել այն աչքում, վորի մեջ տուբերկուլին և կաթեցված։ Քանի վոր վորոշ անասուններ ալելի ուշ են հակադրում, անհրաժեշտ ե հաշվեառումը կատարել հաջորդաբար 6, 9, 12 և 24 ժամ հետո։

Աչքում ստացված փոփոխությունների համաձայն կարելի յե հետեւյալ յեղբակացությունները անել՝

1. Յեթե աչքի լորձաթաղանթը խիստ կարմրել ե, ուռել ե և աչքի ներքին անկյունից թարախոտ հեղուկ ե արտահոսում, նշանակում ե ուսակցիան դրական ե, այսինքն՝ անասունը հիվանդ ե տուբերկուլյողով։

2. Յեթե նկատվում ե աննշան կարմրություն; արտասվահոսություն, քիչ թարախահոսություն կամ թարախ չի լինում՝ ուսակցիան կասկածելի յե համարվում։

3. Ուսակցիան համարվում ե բացասական այն դեպքում, յերբ աչքում վոչ մի փոփոխություն չի առաջանում։

Կասկածելի ուսակցիայի դեպքում աչքի փորձը լրիվ նորից կրկնվում ե նույն աչքում 5—7 որից։ Քանի վոր տուբերկուլյողով հիվանդներին հայտաբերելու համար աչքի փորձը ներկայում ամենաարմատական միջոցն ե հանդիսանում, ուստի խոշոր յեղջյու-

ըալոր անասուն և մասնավորապես կով կամ հորթ ձեռք բերելիս և կամ տնտեսության մեջ տուբերկուլ լողի կամկած լինելու գեղքում անհրաժեշտ և ժամանակին դիմել անասնաբուժին, վերոհիշյալ փորձերի միջոցով հիվանդներին հայտաբերելու համար:

## 8. ԻՆՉՈՒՄ ԿԱՆԽԵԼ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՒ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵջ

Խոշոր յեղջուրավոր անասունի տուբերկուլյոզի տարածումը տնտեսության մեջ կանխելու համար անհրաժեշտ և կիրառել մի շարք նախազգուշական միջոցառումներ, վորոնց շնորհիվ հնարավոր կլինի տնտեսության մեջ վարակի մուտքը դրսից կանխել ուժեղացնել կենդանու որգանիզմը և նրանց ապահովել անհրաժեշտ սանիտարական պայմաններով:

Այնից առաջ նոր տնտեսություն կազմակերպելիս պետք են հետեւի, վոր տյդ տնտեսության համար ձեռք բերվող խոշոր յեղջուրավոր անասունն առողջ լինի: Դրա համար ել անասունին իր սկզբնական վայրում պետք են քննի անասնաբուժը թե տուբերկուլյոզի և թե այլ վարակիչ հիվանդությունների նկատմամբ և թույլտվություն տա այդ վայրից անասուն տանելու համար:

Անասունների համար կառուցված կամ հատկացված շենքերը պետք են մաքուր լինեն, լուսավոր, չոր, ողավետ և անասնաբուժա-սանիտարական կանոններին լիովին համապատասխան:

Դրսից բերված անասունները, յեթե այս կռմ այն

պատճառով տուբերկուլինիցայի յենթարկված չեն, կամ յեթե նրանց առողջական դրությունը կասկած և առաջացնում, տնտեսության մեջ պետք յենթարկվեն տուբերկուլինիցացիայի և պահվեն առանձին՝ մինչև նըրանց առողջական դրության պարզվելը:

Տնտեսության մեջ՝ յեղած խոշոր յեղջուրավոր անասունը տարեկան առնվազն յերկու անգամ պետք է յենթարկվի տուբերկուլինիցացիայի (գարնանը և աշնանը)՝ առանձնացնելով դրական ուեակցիա տվող ներին: Կարիք յեղած դեպքում պետք են կատարվի նաև բակտերիոլոգիական հետազոտում բաց տուբերկուլյոզով հիվանդներին, այսինքն բացի արագորդող ներին հայտաբերելու համար:

Անասունների շենքերը տարին յերկու անգամ պետք են հիմնովին ախտահանվեն, իսկ տուբերկուլյոզով հիվանդ անասունների շինությունները պետք են ախտահանվեն ավելի հաճախ՝ անասնաբուժի ցուցումով:

Տնտեսության ցուլը պետք են ոգտագործվի միայն տվյալ տնտեսության կովերի համար: Օուերին այլ հարեւան տնտեսությունների համար ոգտագործելու անհրաժեշտության դեպքում նրանք պետք են ոգտագործվեն միայն արհեստական սերմնավորման համար, իսկ տնտեսություն վերադառնալուց հետո անպայման պետք են յենթարկել տուբերկուլինիցացիայի: Առանձին տնտեսության սպասարկող անձնակազմը պետք են աշխատի արտհագուստով, վորը աշխատանքից հետո մնում են տվյալ տնտեսության մեջ:

Կողմանակի անձանց մուտքը տնտեսություն բուրովին պետք են արգելվի: Պաշտոնական գործերով յեկող մարդկանց կամ յերկող մարդկանց պահպանության մեջ:

ների շենքերը միայն անասնաբուժի և վարչության  
թույլտվությամբ:

Տնտեսությունն սպասարկող անձնակազմը տու-  
բերկուլյողից ազատ պետք ե լինի և նրանք պարբե-  
րաբար պետք ե յենթարկվեն բժշկական քննության:

Տնտեսության մեջ գտնվող այլ անասունները,  
վորոնք յենթակա յեն տուբերկուլյողի (խոզեր, թռո-  
չուններ, այծեր և այլն), նույնպես պետք ե յենթարկ-  
վեն պարբերական անասնաբուժական քննության  
և նրանց վերաբերյալ պետք ե կիրառել այն բո-  
լոր միջոցառությունները, վորոնք կիրառվում են խոշոր  
յեղջուրավոր անասունների վերաբերյալ՝ տուբերկու-  
լյողի մուտքն ու տարածումը տնտեսության մեջ կան-  
խելու համար:

#### 9. ՊԱՅՔԱՐԻ ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԽՈՇՈՐ ՅԵՂՋՈՒ- ՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆԻ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՒՆԻ ԴԵՄ

Ինչպես տեսանք, խոշոր յեղջուրավոր անասունի  
տուբերկուլյողի դեմ պայքարի միջոցառություններից մեկն  
և անասունների պարբերական տուբերկուլինիզացիան,  
տարին առնվազն յերկու անգամ:

Ցեթե այդպիսի պարբերական տուբերկուլինիզա-  
ցիայի ժամանակ հայտաբերվում են տուբերկուլյողով  
հիվանդներ կամ յեթե տնահասության մեջ հայտաբեր-  
վում են տուբերկուլյողի կլինիկական նշաններով հի-  
վանդ անասուններ, այդ վեպքում պետք ե կիրառվեն  
այնպիսի միջոցառություն, վորոնց միջոցով հնարավոր  
կլինի ժամանակին վերջ տալ հիվանդությանը տվյալ  
տնտեսության մեջ և կանխել հիվանդության տա-

րածության այլ անտեսությունների անասունների, ինչ-  
պես նաև մարզկանց մեջ:

Բայց առերերկուլյողի կլինիկական նշաններ ունե-  
ցող կամ բակտերիոլոգիական հետազոտության միջոցով  
հայտաբերված հիվանդ կենդանիները, անկախ նրանց  
ցեղական, արտադրական և այլ հատկանիշներից, վր-  
պես վտանգավոր և բացահայտ վարակ տարածողներ,  
յենթարկա յեն սպանողի:

Տուբերկուլինիզացիայի ժամանակ զրական ռեակ-  
ցիա տվող, սակայն բաց առերերկուլյողի կլինիկական  
նշաններ չունեցող անասունների համար պետք ե  
առանձնացվեն մեկուսացված հատուկ անահետություն-  
ներ (տուբերկուլինային տնտեսություն), Փերմա-  
ներ, վրատեղ կենդանիները պահպան են այլ անահե-  
տություններից միանգամյան առանձնացված վիճա-  
կում:



ԲՈՂԱՆԴՅԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Գյուղատեսական անասունների տարերկույթը . . . . .	3
2. Տուբերկուլյոզի առածութեա ու նցա անռեսական նշանակությունը . . . . .	5
3. Տուբերկուլյոզի պատճառները . . . . .	6
4. Վարակի տաքածման ճանաչարկները . . . . .	9
5. Տուբերկուլյոզի եյտթյունն ու նշանները . . . . .	12
6. Տուբերկուլյոզի տեսակները . . . . .	15
7. Տուբերկուլյոզի զեագնոսական (ախտորոշումը) . . . . .	17
8. Ինչպես կան լին առ բերկուլյոզի տաքածութը անահոռության մաջ . . . . .	22
9. Պայքարի միջոցառութեան էթօռը յեղջաւրավոր անասունի տաքածուլյոզի դեմ . . . . .	24

Պատ. խմբագիր՝ Դ. ՀԱՐՄԻԹՅՈՒՆՅԱՆ

Տեխ. խմբագիր՝ Լ. ՈՒ ՇԱՍՆ

Սրբազն Մ. ԵԱՐՏԻԿՅԱՆ

Քւավլիկաբելիագոր՝ 9230 Հրատ. № 1965

Պատվեր 287: Տիրաժ 2000

Հանձնված ե արտադրության՝ 1939 թ. հունիսի 22-ին

Ստորագրված ե ապագաբելիության համար 1939 թ. նոյեմբերի 10-ին

ՀՀ Ազգային գրադարան



NL0285835

ԳԻՒՐ 16 ԿՈՎ.

617

8319